


Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՏՈՒՆ 1

ԴԻՄՈՒՄ



Մեծարգո պարոն Վարչապետ.

Նախատոնական այս օրերին դիմում ենք Ձեզ Գյումրի քաղաքի Շիրակ օդանավակայանի հանրակացարանային մասնաշենքում բնակվող բնակիչներու և ուզում ենք Ձեզ Բաճկորեն գարնացնել, քանի որ մենք ոչ թե բողոքելու խնդիր ենք հետապնդում, այլ ցանկանում ենք մեր շնորհակալական խոսքն ուղել Ձեզ և Ձեր կառույցներից մեկին՝ պետական գույքի կառավարման վարչությանը՝ ի դեմս վարչության պետ պարոն Արման Սահակյանի, որը զբաղվում է հանրակացարանային բնակարաններում բնակվող աղետի գոտու բնակիչների սեփականաշնորհման գործընթացով:

Ուզում ենք Ձեզ հայտնել, որ աղետից հետո արդեն բազում տարիներ այդ պայմաններում բնակվողներին մոտ հույսի շող առաջացավ, երբ պարոն Սահակյանը ստանձնեց վարչության պետի պաշտոնը: Հենց սկզբից պարզ դարձավ, որ երիտասարդ ղեկավարը մարդկային բարձր որակներով է օժտված և սոցիալական խնդիրները գտնվում են նրա ուշադրության կենտրոնում:

Պարոն Սահակյանը և իր աշխատանքային մասնագիտական թիմը ի դեմս քաղաքականության վարչության բաժնի աշխատակիցների, կարողացան տեսնել շարժել այնքան տարիներ հուզող մեր հանրակացարանային բնակարանների խնդիրը և այն արդեն շարունակական գործընթաց է ու առաջին բնակիչների բնակարանների նվիրություն որոշումը այս օրերին քննարկվելու է մեր հանրապետության կառավարությունում: Մենք լիահույս ենք, որ դուք կկայացնեք արդար որոշում, որը յուրօրինակ տոնական նվաճում կդառնա մեզ համար:

Ցանկանում ենք հատուկ շնորհակալություն հայտնել Ձեզ և պարոն Արման Սահակյանին ու նրա ղեկավարած հիմնարկի մեր գործին անմիջական առնչություն ունեցող այն մասնագետներին, որոնք ցուցաբերեցին մարդկային բարձր որակներ և գերծ պատեցին մեր արդեն այնքան սովորական դարձած բյուրոկրատական քաշքշուկներից: Սակայն շփվելով տարբեր կառույցների հետ մենք կարող ենք վստահաբար ասել, որ պետական գույքի կառավարման վարչության քաղաքականության վարչության բաժնի աշխատակիցների աշխատավճար ընդօրինակաման և խրախուսանքի է արժանի:

Մեծարգո պարոն Վարչապետ ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնելով Ձեզ, պարոն Արման Սահակյանին և պետական գույքի կառավարման վարչության աշխատակիցներին, ցանկանում ենք շնորհավորելով Ձեզ բոլորիդ և Ձեր ընտանիքներին մոտեցող Վերանորոգի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ ու մաղթել առողջություն և աշխատանքային եռանդ մեր երկրի առջև ծառայած խնդիրների լուծման բարդ, սակայն պատվաբեր գործում:


Լիահույս ենք, որ ոմանք մինչև տարեվերջ, իսկ մյուսները գալիք տարվա ընթացքում կդառնան բնակելի տարածքների սեփականատեր, որը էլ ավելի կամրապնդի մեր հաստատակամությունը չլքելու հայրենի Գյումրին ու մեր պապերից ժառանգած Հայրենիքը:

Լավագույն մաղթանքներով և հարգանքներով՝


1. Հովիկ Սուրբյան (ընտանիքը 4 անդամից)

 (Արևելյան փող., 2. 3, բն. 6)


2. Մտեփան Վակոբյան (ընտանիքը 7 անդամից)

 (Արևելյան փող., 2. 3, բն. 43)


3. Էդվարդ Աբեխյան (ընտանիքը 4 անդամից)

 (Արևելյան փող., 2. 3, բն. 41)


4. Վարդան Վրզարյան (ընտանիքը 2 անդամից)

 (Արևելյան փող., 2. 3, բն. 47)

5. Մարտին Կարությունյան (ընտանիքը 1 անդամից)

 (Արևելյան փող., 2. 2, բն. 12)


✓ 6. Մարիետա Ավետիսյան (ընտանիքը 6 անդամից)

 (Արևելյան փող., Կոմիտասի 8)

Արեւիկայի քաղաքի Գարնապետի Մեծկարգայի
Վարչարարի Գրասենյակից և հասցեագրված



ՀՀ 2 1117



ՀՀ Գարնապետի Մեծկարգայի
Վարչարարի Գրասենյակից և հասցեագրված